

ՆՈՐ ՌԴԱԶՈՒ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Կը յիշէք, մեր տղայութեան ժամանակ երբ բնաբանութիւն կը սորվէինք վարժարանաց և լիկէոնաց մէջ կանցի դասագրոց ո՞ր պատ- կերին վրայ այնչափ հետաքրքրութեամբ և սիրով կը նայէինք։

Այն պատկերը կը ներկայացնէր մեծ օդապարիկ մը իւր մակոյ. կողմէ հանդերձ մոլորեալ ամպիրու մէջ, յորում կը գտնուէր մար- դու մը մանրադիր կերպարանքը որ ունէր ի ձեռին նշանի դրոշ մը։

Մեզ պատանեաց այն ժամանակ նախանձ և մեծ փափագ մը կու դար օդապարիկին կողսկին մէջ հանգչած բարձրանալ գէպ ի վեր։ Մեծ սիրով և փութով կը սորվէինք դասագրոց այն զլւկուր, յօժա- րութեամբ կը լուծէինք օդապարիկին տուաջարկութեանց հաւասա- րութիւնները. ուրախութեամբ կը գտնէինք քիմիական զօրութեանց քանակին սրոշող ձևերն որք կարեոր են ջրածին կազը առաջ բերե- լու, օդապարիկը ուռեցնելու համար. և զարդնկերներէս շատերը ՚ի վերջ այս դասախոսութեան եռանդեամբ կ'աղաղակէին. ինչ պատ- ճառաւ մենք ակ պիտի շնանապարհորդենք օդաշու գնտով։

Բայց օդապարիկը ցարդ խիստ քիչ անգամ կը տեսնուին մեր հը- րապարակաց մէջ, զրեթէ ոչինչ յառաջաղիմութիւն ըրած է ամբողջ դարու մը մէջ. թէպէտ բու գնտոյն նիւթը բարւոգած է, յիրաւի ու- սումնասիրած են աւելի խնամքով միժնոյրտի հոսանքները, բայց գը- րեթէ նոյն վտանգները՝ որք կրնային հանդիպիլ Մոնկոլֆիէի, 1783ին յԱնոնէ, արդ ևս կրնան հանդիպիլ իւնի, տ'Արդուայի, կօտարի, նա- տարի և ձիփփարի, այս վերջին ամաց մէջ կատարած արշաւանաց մէջ։

Այս պատճառաւ ահա, թէպէտ ցաւագին պատահարներն քիչ են օդային ճանապարհորդութեանց մէջ, սակայն սակաւք կը համարձա- կին արհամարհել ոյս առասպելեալ վտանգները որք մեծաւ մասամբ շափազանցութիւն են, և չեն կրնար վայելել հրաշալի և գեղեցիկ տե- սարաններ։

Թէ յլրաւի օդապարիկի վտանգները մասամբ շափազանց են և մասամբ երեւակայական, ես իսկ անձամբ փորձեցի և համոզուեցայ ՚ի Միլան կօտարի հետ չու մը ընելով։ Որոշեցինք երկուարթի ժա- մը 4 ին, և սրոշեալ ժամուն պատրաստ ի ճանապարհորդ ընկերօն։ Անձ մը որ օդապարիկի ժանօթութիւն չունի, կը կարծէ թէ վտանգնե- րէ ազատ լինելու համար զարաւու և հաստատուն շինութիւն մը պէտք է, որոյ վրայ հանգչին այն նուրբ չուանները, յորոց կը կախուի մակոյին. ուստի մեծ տպաւորութիւն կընէ այն անձին վրայ զիտնալ և տեսնել թէ զնոյն պատասը ձեացած է ճենական մետաքսեայ պարզ կտաւէ, զոր գաղղիացիք կը կոչեն (ponghee), օծեալ ՚ի ներքուստ և յարտաքուսա անթափանց վէրնիչէ քանի մի խաւերով։

կարծես թէ մատով իսկ կրնաս ծածկել դայն, և սակայն այս-
պիսի թեթև կտաւ մը կարող է քանի մի կենդինար ծանրութիւն
վերցունել:

Երբ համանք, օդապարիկը գեռ պատրաստ չէր, կօտար փոխա-
նակ ջրածին կազը գործածելու որ օդէն 14 անգամ թեթև է, լա-
ւագոյն համարեցաւ թէ արագ պատրաստութեան և թէ խնայու-
թեան համար գործածել լուսաւորութեան կազը որ երկու անգամ
միայն թեթև է քան զօդ: Երկայն կտաւէ վէրևիշապատ խողովակ
մը կը հաղորդէր զկազն օդապարիկն՝ որ բաւական արագութեամբ
կ'ուռէր. 4 ու կէսին գործողութիւնը լմնցաւ: Կօտար կարմերես
խեցգետնի նման վերջապէս լմնցուց իր վերջին արամագրութիւններն
առ բեռնակիրա որք իրեն կ'օգնէին, ուռենիէ կողովին տակը զրին ա-
ւազի պարկը և կազային ըմպելիքներ ճամբորդութեան մէջ ըմպելու
համար. լուսանկարիչը կ'սպասէր վայրկենին՝ յորում կարենար ճա-
նապարհորդաց նկարը հանել յետագայից աւանդելու համար. ժողո-
վորդն ալ անհամերեռութեամբ կ'սպասէր մեր յամնս վերելու-
թեան. յետին ողջոյնները արուեցան, այն ատեն կօտար մերձեցաւ
մեզի, և իւր քաղցր ժախտով ըսաւ. Պարոնայք, եթէ կը հաճիք տե-
ղերնիդ կեցէ:

Ամենայն զդուչութեամբ և հանգարտութեամբ մակուկին մէջ մը-
տանք: Դու այս անկիւնը, դու հոս, դուն ալ եզերքին կոթնէ. ևս
մէջտեղը կը նստիմ. ձեռքդ հոս, դիր, շատ աղէկ. ահաւասիէ կը
բարձրանանք, խնդրեմ ամեննին մը շարժիք:

Ուռենիէ կողովին մէջ կօտար զմեզ ամենքս ալ արուեստաւորի
աչօք և սիրով տեղաւորեց, խառնիճաղանճը հեռացնել տուաւ, յե-
տոյ աղաղակեց առ լուսանկարիչն.

— Պատրաստ ես.

— Պատրաստ.

— Ուշագրութիւն. քաշ:

Արագահան գործիք մը մի քանի երկվայրկենի մէջ իւր գործողու-
թիւնը աւարտեց. վերջապէս լուսանկարիչն ալ դոհ եղաւ, և մենք
պատրաստ էինք մեկնելու:

— Թողուցէք ամէն բան:

Քսան կորովի բազուկներ, որ զմեզ գնույն հետ գամեր էին երկրի
վրայ, թուլացան այս հրամանին վրայ. օդապարիկը կը ձգէ մակոյ-
կին լուանները և առ երկվայրկեան քանի մի մէզը արագութեամբ
կը բարձրացնէ զմեզ օգոյ մէջ:

Ո՞հ, ի՞նչպէս քաղցր օդ մը կը շնչէինք, վերջապէս երկրէ աղատեր
էինք և միջնորդտին մէջ էինք:

Արդեօք երբեմն փորձեր են մեր ընթերցողք հեռաղէտ գործույն
հակառակ կողման գիտել, անջուշ դիտեր են որ ֆիզիգական պարզ

օրինաց մը պատճառաւ՝ առարկայները այնքան փոքր, բայց ամենավլնիս և կատարեալ կը տեսնուին :

Սոյն այս զգացմոնքը մենք ալ ունեցանք երկրէս հաղարաւոր մէզը հեռանալու ժամանակ. ձեռքերնիս հաստատուն բռնած մակու. կին չուանները, զլուխնիս դուրս հանած՝ նոր հրաշալի տեսարանները կը գիտէինք՝ որ անթիւ հազարամէզրէ յօրինեալ հորիզոն մ՞էր :

Ի՞նչ խեղճ բան կը տեսնուէր մեր մեծ Միլան քաղաքը, իի եռան. գեամբ և շարժուն կենօք. որ այսչափ քիչ միջոցի մէջ կէտաշափ ամփոփուեր էր, և հազիւ երբեմն երբեմն կը հասցնէր առ մեզ իւր ճարտարագործ հաստատութեանց մետաղական ձայներն և արձա. գանքը :

Ուր էին, չէինք կրնար զանազանել իւր բարձրաբերձ և մեծակա. ռոյց չէնքերն և պայտաները, իւր հրաշալի մայր եկեղեցին, և մեծա. գործ կրպակներն և արուեստանոցներն :

Լումպարտեան ընդարձակածաւալ դաշտերն և մարգագետիններն շրջապատեալ՝ ի բիւրաւոր ծառոց և սոսգեալք՝ ի վտակաց, փոքր պարտիզի մը բաժանմանց կը նմանէին, և ծառերը՝ խոնաւ դաշտաց վրայ բաւանող մամուռներու չափ կը տեսնուէին :

Արահետ և օձապատոյս պղղոտաները՝ ամենաբարակ և սպիտակ երիզի մը կը նմանէին որք դաշտաց անհուն կանաչութեան մէջ կը կորսուէին. երկաթէ աւղին մոխրագոյն ճամբուն վրայ՝ թղթի վրայ քաշուած ոյլնչ զծեր կը տեսնուէր. կապտագոյն ճակը՝ ողորկ և փայլուն փորը հայելոյ մը կը նմանէին. եկեղեցիք և զանդակա. տունք, գիւղական տնակք, փոքր տղայոց ընծայ տրուած խաղալիկ. ներու կը նմանէին :

Ատտա և Դիշինո գետերը աւազախառն հեղեղատի մը կը նմա. նէին, կ'երևէին և կ'աներեւութանային մեր աշաց առջև ըստ ուղղու. թեան մժնողորտային հոսանաց որ կը ձգէր զմեզ աստ կամ անդ ընդ լումպարտեան գեղեցիկ երկնաւ :

Միայն սաստիկ արեւը մեր զիլսուն վրայ կարծես թէ կը մրճահա. բէր և կը պապակեցնէր մեր շրթունքը. բայց մենք այնու հանդերձ բնութեան զեղեցկութենէն հրապուրեալք անզթիթ սկեռեալ աշքը կը գիտէինք այս տեսարանը. մեր խորհրդաւոր լրութիւնը ոչ կ'իշ. խէր ընդհատել. բայց մարդ վասն զի ամէն բանի կը վարժի՛ առաջին զգացմունքը անցնելէն վերջը՝ այսպէս մենք ալ վարժեցանք և տեսա. րանն ա՛լ ևս իւր հրապուրանաց մէկ մասը կորոյս. Ակսանք ուրա. խութեամբ և առատարար խմել, յետոյ յաջորդեց խօսակցութիւնը և այցետումներու փոխանակութիւնը :

Հարուճակելի :